ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2012թ. թիվ 32-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի “բ” ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի թիվ 38 որոշմամբ ընդունված մարզային զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգի ու մեթոդական ուղեցույցի պահանջներին համապատասխան մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակայնության ու հասարակական կազմակերպությունների կողմից կատարված առաջարկությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1130-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների հետևողական իրականացումն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Լոռու մարզային զարգացման մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Ոլորտային աշխատանքային խմբերի նախագահներ նշանակել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հաստատել ոլորտային աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Ոլորտային աշխատանքային խմբերի նախագահներին՝

Մինչև ս/թ մարտի 20-ը մարզպետի տեղակալ Ա.Դարբինյանին ներկայացնել համապատասխան ոլորտի առկա իրավիճակի վերլուծությունը, 2012-2013թթ. ոլորտի զարգացման մարզային կարիքները՝ ըստ առաջնահերթության և դրանց իրականացմանն ուղղված ներդրումային միջոցառումների պլանը՝ նշելով անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2009թ. մարտի 26-ի “Մարզային զարգացման ծրագրի ինստիտուցիոնալ կառույցները հաստատելու մասին” թիվ 85-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. փետրվարի 27
ք.Վանաձոր